

Իմ մամաս ու ես

շատ անուշիկ է իմ մամաս...
այտերը կարմիր խնձորի նման,
իսկ սեւ սեւ մազերը օրէ օր կ'երկնան...
կ'երկնան...

անցաւ 1 ամիս
եւ սեւ սեւ մազերը իմ մամայիս
գրեթէ ուտերուն հասան...

անցաւ 2 ամիս
եւ սեւ սեւ մազերը իմ մամայիս
ուտերուն հասան...

անցաւ 3 ամիս
եւ սեւ սեւ մազերը իմ մամայիս
ուտերէն վա՛ր սահեցան...

անցաւ 4 ամիս
եւ սեւ սեւ մազերը իմ մամայիս
գրեթէ արմուկներուն հասան...

անցաւ 5 ամիս
եւ սեւ սեւ մազերը իմ մամայիս
արմուկներուն հասան...

անցաւ 6 ամիս
եւ սեւ սեւ մազերը իմ մամայիս
արմուկներէն վա՛ր սահեցան...

անցաւ 7 ամիս
եւ սեւ սեւ մազերը իմ մամայիս
գրեթէ դաստակներուն հասան...

անցաւ 8 ամիս
եւ սեւ սեւ մազերը իմ մամայիս
երկնցան... երկնցան...

անցաւ 9 ամիս
եւ ծի՛կ... է՛ս ծնայ...
այտիկներս՝ կաս կարմիր խնձոր
իմ մամայիս նման...

իսկ մազիկներս...

մէկ թել մազ
երկու թել մազ
երեք թել մազ
չորս թել մազ
հինգ թել մազ
վեց թել մազ
եօթը թել մազ
ութ թել մազ
ինը թել մազ

նազ, նազ
խազ, խազ
խազը՝ ա՛ջ
խազը՝ ձա՛խ
աջ ու ձախ
խազը՝ մէջտեղ

(<այկա՛զ, <երիքնա՛զ...)